

ԳԱԼՈՒԲՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՔ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱՆՊԱՍՏՆԵՐ

2019-ի ՉԵԿՈՅՑ

ՆԵՐԱՃԱԿԱՆ

2014-ԷՆ 2018-ի կրթնապաստներու հնգամեայ ծրագիրին աւարտէն ետք, 2019-ԷՆ 2023-ի նոր հնգամեայ ծրագիրը մեկնարկուեցաւ, որ նոյնպէս կը կեդրոնանայ Հայագիտութեան ոլորտին վրայ. ծրագիրը ենթարկուեցաւ երկու հիմնական փոփոխութիւններու՝ 1) «Հայ ուսանողներու գերազանցութեան կրթնապաստ»-ը կասեցուեցաւ, եւ 2) «Արեւմտահայերէնով դասաւանդող ուսուցիչներու կրթնապաստի ծրագիր»-ը միացաւ այլ ծրագիրներու:

2019-ի արդիւնքները կը վերաբերին հետեւեալ վեց կրթնապաստի ծրագիրներուն՝

1. [Հայագիտութեան կրթնապաստներ](#)
2. [Հայագիտութեան կարճաժամկէտ հետազոտական դրամաշնորհներ](#)
3. [Կարճաժամկէտ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար](#)
4. [Նախ-ընթացաւարտութեան կրթնապաստներ](#)
5. [Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթնապաստներ](#)
6. [Արտակարգ կրթնապաստներ](#)

ՆԱԽԱՀԱՇԻԻ ՅԱՏԿԱՑՈՒՄ

1. Հայագիտութեան կրթնապաստներ

Կրթնապաստի այս ծրագիրը բաց է Հայագիտութեան մէջ մասնագիտացող ուսանողներու եւ հետազոտողներու, որոնք Master's, PhD, կամ Post Doc-ի կը հետեւին ճանչցուած որեւէ համալսարանի մէջ:

2019-ին, Բաժանմունքը ստացաւ 60 դիմում եւ 12 կրթնապաստ յատկացուց Հայաստանէն, Գանատայէն, Ֆրանսայէն, Ռուսաստանէն, Թուրքիայէն, Անգլիայէն եւ Միացեալ Նահանգներէն ուսանողներու: Կրթնապաստները տարեկան 4,600-ԷՆ 22,000 Եւրօ Էին (յատկացուած առաւելագոյնը 3 տարուան համար):

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ Հայագիտութեան յատկացուած կրթաթոշակներու 2019-ի ընդհանուր պատկերը՝

Հայագիտութեան կրթնապաստներ	Յատկացում (Եւրօ)	Զանակ
Նոր կրթնապաստներ	162,896	12
Նորոգուած կրթնապաստներ	149,500	14
ԸՆԴԱՄԵՆԸ	312,396	26

2. Հայագիտութեան կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ

Կրթանպաստի այս ծրագիրը Հայագիտութեան ոլորտին մէջ աշխատող ակադեմականներու, հետազոտողներու եւ ուսանողներու (Հայաստանէն դուրս) առիթը կ'ընծայէ մասնակցելու գիտաժողովներու, սեմինարներու, հետազոտական ճամբորդութիւններ կատարելու եւ ակտիւն:

2019-ին, Բաժանմունքը ստացաւ 113 դիմում եւ 59 նպաստ յատկացուց: Հինգ նոր կրթաթոշակ ալ յատկացուեցաւ Pázmáni Péter կաթողիկէ համալսարանի մէջ Հայագիտութեան Master's-ի ուսանողներու:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2019-ին յատկացուած «Հայագիտութեան համար կարճաժամկետ հետազոտական դրամաշնորհներ»-ու ընդհանուր պատկերը՝

Հայագիտութեան համար կարճաժամկետ դրամաշնորհներ	Յատկացում (Եւրօ)	Քանակ
Հայագիտութեան կարճաժամկետ դրամաշնորհներ	113,166	59
Pázmáni Péter կաթողիկէ համալսարան (Master's)	25,000	5
ԸՆԴՀԱՄԵՆԸ	138,166	64

3. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամբորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար

Կրթանպաստի այս ծրագիրը Հայաստանի մէջ ապրող ուսանողներու, երիտասարդ ակադեմականներու եւ հետազոտողներու առիթը կ'ընծայէ կարճաժամկետ դասընթացներու եւ վրապատրաստումի ծրագիրներու հետեւելու, ինչպէս նաեւ միջազգային գիտաժողովներու եւ աշխատանոցներու ընթացքին իրենց աշխատութիւնները ներկայացնելու:

2019-ին, Բաժանմունքը ստացաւ 243 դիմում եւ 94 նպաստ յատկացուց Հայաստանի քաղաքացիներու որ արտերկրի մէջ գիտաժողովներու մասնակցին: Յատկացուած գումարները 410-էն 2,035 Եւրոյի միջեւ էին, իսկ ընդհանուր գումարը կազմեց՝ 95,088 Եւրօ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2019-ին յատկացուած «Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամբորդական դրամաշնորհներ Հայաստանի ուսանողներուն համար» ծրագիրին ընդհանուր պատկերը՝

Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամբորդական դրամաշնորհներ Հայաստանի համար	Յատկացում (Եւրօ)	Քանակ
Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամբորդական դրամաշնորհներ	95,088	94

4. Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ

Կրթանպաստի այս ծրագիրը զարգացող երկիրներու մէջ ապրող հայ ուսանողներու առիթը կ'ընծայէ համալսարանական կրթութիւն ստանալու՝ նախ-ընթացաւարտ մակարդակի համար:

2019-ին, Բաժանմունքը ստացաւ 158 դիմում եւ 35 կրթանպաստ յատկացուց: Յատկացուած գումարները 1,500-էն 4,000 Տոլարի միջեւ էին:

Այս ծրագիրին զուգահեռ Լիբանանի համալսարաններուն մէջ «Յատուկ կրթութիւն» ուսանողներու յատկացուեցաւ երեք նոր կրթաթոշակ 4,500 Տոլար արժողութեամբ՝ երեք ու կէս տարուան համար, եւ 2018-էն կրթաթոշակ մըն ալ նորոգուեցաւ: Կրթանպաստ մըն ալ

յատկացուցեցաւ ուսանողի մը որ մասնակցեր երկու շաբաթուայ կրթական դեկավարութեան ծրագիրի մը Փորթուկալի մէջ (Altemus): Նախորդ տարիներուն յատկացուած 43 կրթաթոշակ նորոգուեցաւ 2019-ին:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2019-ին յատկացուած «Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ»-ու ընդհանուր պատկերը՝

Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ	Յատկացում (ԵԼՐՕ)	Քանակ
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նոր կրթանպաստներ	93,811	35
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նորոգուած կրթանպաստներ	106,573	43
Յատուկ կրթութեան ծրագիր Լիբանան – նոր կրթանպաստներ	11,845	3
Յատուկ կրթութեան ծրագիր Լիբանան – նորոգուած կրթանպաստներ	4,554	1
Altemus Ծրագիր	520	1
ԸՆԴԱՄԵՆԸ	217,303	83

5. Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստներ

2019-ին, Բաժանմունքը ստացաւ հինգ դիմում եւ նպաստ յատկացուց չորս ուսանողի: 2018-ին յատկացուած չորս կրթաթոշակ նորոգուեցաւ:

Հետեւեալ աղիւսակը կը ներկայացնէ 2019-ին յատկացուած «Փորթուկալի մէջ հայ համալսարանականներու կրթանպաստ»-ի ընդհանուր պատկերը՝

Հայ ուսանողներ Փորթուկալի մէջ	Յատկացում (ԵԼՐՕ)	Քանակ	Է.	Ա.
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նոր կրթանպաստներ	10,950	3	3	0
Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ – նորոգուած կրթանպաստներ	10,600	2	1	1
PhD ուսանողներ – նորոգուած կրթանպաստներ	8,000	2	2	0
ԸՆԴԱՄԵՆԸ	29,550	7	6	1

6. Արտակարգ կրթանպաստներ

2019-ին 5000 Տոլար արժողութեամբ մէկ արտակարգ կրթանպաստ յատկացուեցաւ:

Ասոնց առընթեր, Հայկական Բաժանմունքը համահովանաւորեց ծրագիր մը՝ փախստական ուսանողներու որոնք Միջին Արեւելքէն գացած են Հայաստան ուսանելու: Ծրագիրին համահովանաւորներն են՝ ՀԲԸՄ-ը, Սբ. Սարգիս հոգաբարձութիւնը եւ Հայաստանի Սփիւռքի Նախարարութիւնը: 2019-ին Բաժանմունքը յատկացուց 61,000 Տոլար:

ԵՉՐԱՓՈՒԿ ԾՐԱԿՆԵՐ

2019-ին, Բաժանմունքը ստացավ 579 դիմում. դիմողներուն 64%-ը կին էր իսկ 36%-ը տղամարդ: Դիմողներուն 62%-ը Հայաստանէն էր, 7%-ը Լիբանանէն, 7%-ը Թուրքիայէն, 6%-ը ԱՄՆ-էն, իսկ մնացեալ 36%-ը 32 տարբեր երկիրներէ: Դիմողներուն 36%-ը նպաստ ստացաւ:

2019-ին Բաժանմունքը 275 կրթանպաստ յատկացուց (տրոփումները ներառեալ) (փախստականներու կրթանպաստի ծրագիրը չհաշուած) 813,984 Եւրօ գումարի:

2019-ի կրթանպաստի ծրագիր	Յատկացում (Եւրօ)	Քանակ	Է.	Ա.
1. Հայագիտութեան կրթանպաստներ	312,396	26	11	15
2. Հայագիտութեան համար կարճաժամկետ դրամաշնորհներ	138,166	64	32	32
3. Կարճաժամկետ գիտաժողովներու եւ ճամփորդական դրամաշնորհներ Հայաստանի համար	95,088	94	26	68
4. Նախ-ընթացաւարտութեան կրթանպաստներ	217,303	83	29	54
5. Հայ ուսանողներ Փորթուկալի մէջ	29,550	7	6	1
6. Արտակարգ կրթանպաստներ	4,387	1	0	1
Global Excellence կրթանպաստներ - կատեցուող	65,000	6	4	2
Արեւմտահայերէնով դասաւանդող ուսուցիչներու կրթանպաստի ծրագիր - կատեցուող	12,633	2	1	1
ԸՆԴԱՄԵՆԸ	874,523	283	109	174

2019-ին նախորդ տարիներէ ետքը նպաստառու ուսանող իր դրկտորականը պաշտպանեց: